



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

30 օգոստոսի 2016 թվականի

թիվ 92

քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության 30-րդ կետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված) եւ ղեկավարվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշմամբ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնները.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձևաչափերի եւ կառուցվածքների նկարագրությունը.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացին միանալու կարգը:

2. Մահմանեյ, որ սույն որոշմամբ հաստատված նկարագրությամբ նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների տեխնիկական սխեմաների մշակումը եւ արտաքին ու փոխադարձ առեստրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցության իրագործման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրում դրանց տեղադրման ապահովումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն դեպարտամենտի կողմից, որի իրավասության մեջ է Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օր լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝

Տ. Մարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի օգոստոսի 30-ի
թիվ 92 որոշմամբ

ԿԱՆՈՆՆԵՐ

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնները մշակվել են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող հետևյալ ակտերին համապատասխան՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների եւ բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների ու կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագիր.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի փետրվարի 12-ի «Բժշկական արտադրատեսակների գրանցման եւ անվտանգության, որակի ու արդյունավետության փորձաքննության կանոնների մասին» թիվ 46 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի փետրվարի 12-ի «Բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում տեղեկատվական համակարգի ձեւավորման եւ վարման կարգը հաստատելու մասին» թիվ 30 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Ընդհանուր գործընթացներն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» թիվ 200 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունվարի 27-ի «Արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տվյալների էլեկտրոնային փոխանակման կանոնները հաստատելու մասին» թիվ 5 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 29 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայի մասին» թիվ 63 որոշում.

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների եւ բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին համաձայնագրի իրագործման վերաբերյալ» թիվ 109 որոշում:

II. Կիրառության ոլորտը

2. Սույն կանոնները մշակվել են «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) մասնակիցների միջև տեղեկատվական փոխգործակցության կարգն ու պայմանները սահմանելու, այդ թվում՝ այդ ընդհանուր գործընթացի շրջանակներում կատարվող ընթացակարգերի նկարագրության նպատակով:

3. Սույն կանոնները կիրառվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից՝ ընդհանուր գործընթացի շրջանակներում ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգը վերահսկելիս, ինչպես նաև՝ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչները նախագծելիս, մշակելիս եւ լրամշակելիս:

III. Հիմնական հասկացությունները

4. Սույն կանոնների նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

թույլտվություն՝ ընդհանուր գործընթացի մասնակցին որոշակի գործողությունների կատարման իրավունքների տրամադրում.

գրանցման դույեի ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթեր՝ Միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից, կամ ըստ դրանց հարցման, բժշկական արտադրատեսակի գրանցման եւ փորձաքննության հետ կապված ընթացակարգերի իրականացման ընթացքում ձեւակերպված փաստաթղթեր.

բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկություններ՝ բժշկական արտադրատեսակների գրանցման եւ փորձաքննության դիմումների, ինչպես նաև տրամադրված գրանցման հավաստագրերի մասին տեղեկությունների ամբողջություն:

Սույն կանոններում օգտագործվող «ընդհանուր գործընթացի ընթացակարգերի խումբ», «ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտ», «կատարող», «ընդհանուր գործընթացի գործառնություն», «ընդհանուր գործընթացի ընթացակարգ» եւ «ընդհանուր գործընթացի մասնակից» հասկացությունները կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայով սահմանված իմաստներով:

Սույն կանոններում օգտագործվող «ճանաչման պետություն», «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստր», «գրանցման դոսյե», «գրանցման հավաստագիր» եւ «գրանցման պետություն» հասկացությունները կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի փետրվարի 12-ի «Բժշկական արտադրատեսակների գրանցման եւ անվտանգության, որակի ու արդյունավետության փորձաքննության կանոնների մասին» թիվ 46 որոշմամբ հաստատված՝ բժշկական արտադրատեսակների գրանցման եւ անվտանգության, որակի ու արդյունավետության փորձաքննության կանոններով սահմանված իմաստներով:

IV. Ընդհանուր գործընթացի վերաբերյալ

հիմնական տեղեկություններ

5. Ընդհանուր գործընթացի լրիվ անվանումը՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում»:

6. Ընդհանուր գործընթացի ծածկագրային նշագիրը՝ P.MM.06, տարբերակ 1.0.0.:

1. Ընդհանուր գործընթացի
նպատակը եւ խնդիրները

7. Ընդհանուր գործընթացի նպատակը գրանցված բժշկական արտադրատեսակների մասին տեղեկատվության փոխանակման հետ կապված ծախքերի նվազեցման համար նախապայմաններ ստեղծելն է՝ բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում միասնական տեղեկատվական տարածության ստեղծման հաշվին:

8. Ընդհանուր գործընթացի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

ա) արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի շրջանակներում (այսուհետ՝ ինտեգրված համակարգ) ստեղծել բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ տեղեկություններ պարունակող տեղեկատվական ռեսուրսներ.

բ) ապահովել բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) լիազորված մարմինների կողմից էլեկտրոնային տարբերակով եւ ավտոմատացված ռեժիմով՝ ինտեգրված համակարգի օգտագործմամբ, տեղեկություններ ստանալու հնարավորությունը.

գ) ապահովել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրից (այսուհետ՝ միասնական ռեեստր) շահագրգիռ անձանց եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) աշխատակիցների կողմից արդիական, ամբողջական եւ հավաստի տեղեկություններ ստանալու հնարավորությունը՝ Միության տեղեկատվական պորտալի օգտագործմամբ.

դ) ապահովել ընդհանուր տեղեկատվական ռեսուրսների ձեւավորման եւ թարմացման ժամանակ միասնական դասակարգիչների ու տեղեկատուների օգտագործումը:

2. Ընդհանուր գործընթացի մասնակիցները

9. Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը բերված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.ACT.001	Հանձնաժողով	Միության մարմին, որն ապահովում է միասնական ռեեստրի ձեւավորումն ու վարումը, այդ թվում՝ անդամ պետությունների լիազորված մարմիններից տեղեկությունների ստացումը եւ միասնական ռեեստրի թարմացումը, հարցումների հիման վրա բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմիններին ինտեգրված համակարգի օգտագործմամբ ներկայացումը, Միության տեղեկատվական պորտալում միասնական ռեեստրին հասանելիության ապահովումը
P.MM.06.ACT.001	անդամ պետության լիազորված մարմին	գրանցման պետության կամ ճանաչման պետության լիազորված մարմինը (փորձագիտական կազմակերպությունը), որը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
		<p>բժշկական արտադրատեսակների գրանցման հետ կապված ընթացակարգեր է իրականացնում՝ գրանցման ընթացակարգում իր դերով նախատեսված ծավալով, Հանձնաժողով տեղեկություններ է ներկայացնում գրանցված բժշկական արտադրատեսակների եւ բժշկական արտադրատեսակների գրանցման դիմումների մասին, ինչպես նաեւ ըստ հարցման, ինտեգրված համակարգի օգտագործմամբ, տեղեկություններ է ստանում գրանցված բժշկական արտադրատեսակների մասին</p>
P.MM.06.ACT.002	գրանցման պետության լիազորված մարմին	<p>անդամ պետության լիազորված մարմինը (փորձագիտական կազմակերպությունը), որն իրականացնում է բժշկական արտադրատեսակի գրանցման մասին դիմումի քննարկումը, անցկացնում է գրանցման դույլի փորձաքննությունը, համաձայնեցման համար ամփոփիչ փորձագիտական եզրակացության պատրաստումը եւ ներկայացումը, ըստ հարցման կազմում եւ ճանաչման պետության լիազորված մարմին է ներկայացնում գրանցման դույլում</p>

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
		պարունակվող փաստաթղթերը, ինչպես նաև գրանցման դույլի ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերը
P.MM.06.ACT.003	ճանաչման պետության լիազորված մարմին	անդամ պետության լիազորված մարմինը, (փորձագիտական կազմակերպությունը), որն իրականացնում է փորձագիտական եզրակացության քննարկումը, հարցման հիման վրա գրանցման պետության լիազորված մարմնից ստանում է գրանցման դույլում պարունակվող փաստաթղթերը, ինչպես նաև գրանցման դույլի ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերը եւ ներկայացնում է փորձագիտական եզրակացության ճանաչման մասին որոշումը կամ փորձագիտական եզրակացության վերաբերյալ դիտողությունները
P.MM.06.ACT.004	շահագրգիռ անձ	Միության տեղեկատվական պորտալի միասնական ռեեստրից տեղեկություններ պահանջող տնտեսավարող սուբյեկտ կամ անդամ պետության պետական իշխանության մարմին

3. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

10. Ընդհանուր գործընթացն ընթացակարգերի ամբողջություն է՝ խմբավորված ըստ իր նշանակության.

ա) բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հավաքման եւ արդիականացման ընթացակարգեր.

բ) բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացման ընթացակարգեր.

գ) գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխության մասին ծանուցման ընթացակարգեր.

դ) փորձագիտական եզրակացության ուսումնասիրման ժամանակ տեղեկությունների ստացման ընթացակարգեր.

ե) գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ստացման ընթացակարգեր:

11. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերի կատարման ժամանակ բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից փոխանցվում են ինտեգրված համակարգի օգտագործմամբ: Այդ տեղեկությունների հիման վրա Միության տեղեկատվական պորտալում ձեւավորվում եւ հրապարակվում է միասնական ռեեստրը, որին հասանելիությունը տրամադրվում է շահագրգիռ անձանց:

Բժշկական արտադրատեսակների գրանցման հետ կապված ընթացակարգերի կատարման ժամանակ համաձայնեցված գործողությունների իրականացման համար գրանցման պետությունների լիազորված մարմինների կողմից Հանձնաժողով են փոխանցվում բժշկական արտադրատեսակի փորձաքննություն եւ գրանցում անցկացնելու դիմումների (այսուհետ՝ դիմումներ) ուսումնասիրման համար ստացված գրանցման համարների մասին տեղեկություններ՝ ճանաչման պետությունների լիազորված մարմինների կողմից այդ տեղեկությունները հետագայում ներկայացնելու համար: Բժշկական

արտադրատեսակների գրանցման հետ կապված ընթացակարգերն ավարտելով՝ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Հանձնաժողով են փոխանցվում տրամադրված գրանցման հավաստագրի վերաբերյալ՝ միասնական ռեեստրում ներառման ենթակա տեղեկությունները: Հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի փետրվարի 12-ի թիվ 46 որոշմամբ հաստատված՝ բժշկական արտադրատեսակների գրանցման եւ անվտանգության, որակի ու արդյունավետության փորձաքննության կանոնների (այսուհետ՝ Գրանցման կանոններ) պահանջները հայտատուի կողմից խախտվելու դեպքում, այդ թվում՝ գրանցման պետության լիազորված մարմնի կողմից պահանջված փաստաթղթերը ոչ ժամանակին ներկայացվելու դեպքում, Հանձնաժողով են ուղարկվում դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկություններ: Անդամ պետությունների լիազորված մարմինների համաձայնեցված գործողությունների ապահովման համար բժշկական արտադրատեսակների գրանցման գործընթացում կատարվում են ընդհանուր գործընթացի՝ բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հավաքման եւ արդիականացման ընթացակարգերի խմբում ընդգրկված հետեւյալ ընթացակարգերը՝

ստացված դիմումի մասին տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելը,

բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելը,

դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելը:

Հանձնաժողովում պահվող՝ բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից ստանալու անհրաժեշտության դեպքում, ինչպես նաեւ գրանցման պետության լիազորված մարմնի կողմից գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկություններն ստանալու անհրաժեշտության դեպքում, կատարվում են ընդհանուր գործընթացի՝ բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացման ընթացակարգերի խմբում ընդգրկված հետեւյալ ընթացակարգերը՝

բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության ստացում,

բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացում,

բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ստացում,

գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացում:

Գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխման, այդ թվում՝ դրա գործողության դադարման դեպքում կատարվում է «Գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխության մասին ծանուցում» ընթացակարգը, որը ներառված է գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխման մասին ծանուցման ընթացակարգերի խմբում:

Փորձագիտական եզրակացությունն ուսումնասիրելիս կատարվում են ընդհանուր գործընթացի՝ փորձագիտական եզրակացության ուսումնասիրման ժամանակ տեղեկություններ ստանալու ընթացակարգերի խմբում ընդգրկված հետեւյալ ընթացակարգերը՝

փորձագիտական եզրակացությունից տեղեկությունների ուղարկում,

փորձագիտական եզրակացության վերաբերյալ դիտողությունների եւ առաջարկությունների ուղարկում,

փորձագիտական եզրակացության ճանաչման (չճանաչման) հաստատում:

Գրանցման պետության լիազորված մարմնի կողմից գրանցման դույեում պարունակվող լրացուցիչ կամ փոփոխված փաստաթղթեր ստանալու, այդ թվում՝ անդամ պետությունների լիազորված մարմինների հարցումների հիման վրա եւ դիտողություններին ի պատասխան, ինչպես նաեւ՝ գրանցման դույեի ուսումնասիրման գործընթացում փաստաթղթերի ձեւակերպմանը զուգընթաց, այդ թվում՝ փորձագիտական եզրակացության ձեւակերպման դեպքում, գրանցման


պետության լիազորված մարմինը ծանուցում է ճանաչման պետության լիազորված մարմիններին՝ այդ փաստաթղթերն ստանալու համար հարցման հիման վրա հասանելի լինելու մասին: Գրանցման կանոններով նախատեսված՝ փորձագիտական եզրակացության ուսումնասիրման եւ համաձայնեցման աշխատանքների անցկացման համար ապահովվում է գրանցման դույեում պարունակվող փաստաթղթերի ցանկը, գրանցման դույեի (այդ թվում՝ փորձագիտական եզրակացության) ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ցանկը ճանաչման պետության լիազորված մարմնի կողմից հարցման հիման վրա ստանալու հնարավորությունը, այդ թվում՝ այդ ցանկերից ցանկացած փաստաթղթի անհրաժեշտության դեպքում: Գրանցման դույեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ստացման անհրաժեշտության դեպքում, ինչպես նաեւ՝ նշված փաստաթղթերի փոփոխության ժամանակ, կատարվում են ընդհանուր գործընթացի՝ գրանցման դույեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերն ստանալու ընթացակարգերի խմբում ընդգրկված հետեւյալ ընթացակարգերը՝

գրանցման դույեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի փոփոխության վերաբերյալ ծանուցում,

գրանցման դույեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի վերաբերյալ տեղեկությունների ստացում,

գրանցման դույեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ստացում:

12. Ընդհանուր գործընթացի կառուցվածքի բերված նկարագրությունը ներկայացված է 1-ին նկարում:



Նկ. 1. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

13. Ընդհանուր գործընթացի՝ ըստ իր նշանակության խմբավորված ընթացակարգերի կատարման կարգը՝ ներառյալ գործառնությունների մանրամասն նկարագրությունը, բերված է սույն կանոնների VIII բաժնում:

14. Ընթացակարգերի յուրաքանչյուր խմբի համար բերվում է ընդհանուր գործընթացի ընթացակարգերի միջեւ առկա կապերը եւ դրանց կատարման կարգն արտացոլող ընդհանուր սխեմա: Ընթացակարգերի ընդհանուր սխեման կառուցված է UML (մոդելավորման միասնականացված լեզու՝ Unified Modeling Language) գրաֆիկական նոտացիայի օգտագործմամբ եւ ապահովված է տեքստային նկարագրությամբ:

4. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին
տեղեկությունների հավաքման եւ արդիականացման
ընթացակարգերի խումբ

15. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հավաքման եւ արդիականացման ընթացակարգերը կատարվում են բժշկական արտադրատեսակների գրանցման հետ կապված ընթացակարգերի իրականացման ժամանակ:

Դիմումն ստանալիս կատարվում է «Հանձնաժողովին ստացված դիմումի մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.001):

Բժշկական արտադրատեսակի գրանցման, դիմումի մասին տեղեկությունների փոփոխման, ինչպես նաեւ՝ գրանցված բժշկական արտադրատեսակի մասին տեղեկությունների փոփոխման մասին անդամ պետության լիազորված մարմնի կողմից որոշում կայացվելու դեպքում կատարվում է «Հանձնաժողովին բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.002):


Գրանցման կանոնների պահանջները հայտատուի կողմից խախտվելու դեպքում կատարվում է «Հանձնաժողովին դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.003):

Տեղեկությունները ներկայացվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին (այսուհետ՝ Լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ) համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի օգոստոսի 30-ի թիվ 92 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական

ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս:

Ներկայացվող տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի օգոստոսի 30-ի թիվ 92 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձեւաչափերի եւ կառուցվածքների նկարագրությանը (այսուհետ՝ Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձեւաչափերի եւ կառուցվածքների նկարագրություն):

16. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հավաքման եւ արդիականացման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 2-րդ նկարում:



Նկ. 2. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հավաքման եւ արդիականացման ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

17. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հավաքման եւ արդիականացման ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հավաքման եւ արդիականացման ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.06.PRC.001	Ստացված դիմումի մասին	ընթացակարգը նախատեսված է ստացված դիմումի մասին

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
	տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելը	տեղեկությունները ձեռակերպելու եւ Հանձնաժողովին փոխանցելու համար
P.MM.06.PRC.002	Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելը	ընթացակարգը նախատեսված է բժշկական արտադրատեսակի գրանցման մասին, այդ թվում՝ գրանցման հավաստագրի մասին փոփոխված տեղեկությունները ձեռակերպելու եւ Հանձնաժողովին փոխանցելու համար
P.MM.06.PRC.003	Դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելը	ընթացակարգը նախատեսված է դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունները ձեռակերպելու եւ Հանձնաժողովին փոխանցելու համար

5. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացման ընթացակարգերի խումբ

18. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացման ընթացակարգերը կատարվում են անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից համապատասխան հարցումներ ստանալիս:

Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացման ընթացակարգերի կատարման շրջանակներում մշակվում են անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից ստացվող հարցումների հետևյալ տեսակները՝

բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության հարցում,

բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հարցում,

բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների հարցում,

գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների հարցում:

Անդամ պետության լիազոր մարմինը կատարում է բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները թարմացնելու ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության հարցում՝ անդամ պետության լիազորված մարմնի տեղեկատվական համակարգում պահվող՝ բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները Հանձնաժողովում պահվող՝ բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հետ սինքրոնացման անհրաժեշտությունը գնահատելու նպատակով: Հարցումն իրականացնելիս կատարվում է «Բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.004):


Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հարցումը կատարվում է դիմումների վերաբերյալ նշված ամսաթվի դրությամբ արդիական տեղեկությունները, ինչպես նաեւ՝ միասնական ռեեստրում ներառված գրանցված բժշկական արտադրատեսակների մասին տեղեկություններն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստացման նպատակով: Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հարցումը կարող է իրականացվել ինչպես ընթացիկ ամսաթվի, այնպես էլ՝ հարցման մեջ նշված ամսաթվի դրությամբ: Հարցումն իրականացնելիս կատարվում է «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.005):

Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների հարցումը կատարվում է բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ փոփոխված տեղեկություններն անդամ պետության

լիազորված մարմնի կողմից ստացման նպատակով: Հարցում կատարելիս ներկայացվում են բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկություններ, որոնք ավելացվել, հանվել կամ փոփոխվել են հարցման մեջ նշված ամսաթվից ու ժամից մինչև ինտեգրված համակարգի միջոցով հարցում կատարելու պահին ընկած ժամանակահատվածում: Հարցումն իրականացնելիս կատարվում է «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ստացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.006):

Գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների հարցումը կատարվում է գրանցման հավաստագրի համարը գրանցման պետության լիազորված մարմնի կողմից ստանալու նպատակով՝ բժշկական արտադրատեսակի գրանցման մասին որոշում ընդունելիս: Հարցումն իրականացնելիս կատարվում է «Գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.007):

19. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 3-րդ նկարում:



Նկ. 3. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացման ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեման

20. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացման ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացման ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.06.PRC.004	բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ	նախատեսված է բժշկական արտադրատեսակների գրանցման մասին Հանձնաժողովում պահվող


Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
	տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում	տեղեկությունների թարմացման ամսաթվի ու ժամի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու համար՝ ըստ անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից ինտեգրված համակարգի միջոցով ստացված հարցումների
P.MM.06.PRC.005	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացում	նախատեսված է բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ Հանձնաժողովում պահվող արդիական տեղեկությունները նշված ամսաթվի ու ժամի դրությամբ ներկայացնելու համար՝ ըստ անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից ինտեգրված համակարգի միջոցով ստացված հարցումների
P.MM.06.PRC.006	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ստացում	նախատեսված է բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ Հանձնաժողովում պահվող փոփոխված տեղեկությունները՝ սկսած հարցման մեջ նշված ամսաթվից, ինտեգրված համակարգի միջոցով ներկայացնելու համար
P.MM.06.PRC.007	գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացում	նախատեսված է գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացման համար՝ գրանցման պետության լիազորված մարմնի կողմից բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ որոշում ընդունելիս

6. Գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխության մասին ծանուցման ընթացակարգերի խումբ

21. «Գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխության մասին ծանուցում» ընթացակարգը (P.MM.06.PRC.008) կատարվում է գրանցման հավաստագրի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու (չեղյալ ճանաչելու) դեպքում:

Տեղեկությունները ներկայացվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին (այսուհետ՝ Լիազորված մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ) համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի օգոստոսի 30-ի թիվ 92 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում և օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս:

22. Գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխության մասին ծանուցման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 4-րդ նկարում:



Նկ. 4. Գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխության մասին ծանուցման ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

23. Գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխության մասին ծանուցման ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 4-րդ աղյուսակում:

Աղյուսակ 4

Գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխության մասին ծանուցման ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.06.PRC.008	գրանցման հավաստագրի գործողության կարգավիճակի փոփոխության մասին ծանուցում	նախատեսված է գրանցման հավաստագրի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու (չեղյալ ճանաչելու) մասին տեղեկությունները գրանցման պետության լիազորված մարմնի կողմից փոխանցվելու համար


7.Փորձագիտական եզրակացության ուսումնասիրման ժամանակ տեղեկությունների ստացման ընթացակարգերի խումբ

24. Տեղեկությունների ստացման ընթացակարգերը փորձագիտական եզրակացությունն ուսումնասիրելիս կատարվում են բժշկական արտադրատեսակի անվտանգության, որակի եւ արդյունավետության փորձաքննություն անցկացնելու ժամանակ, ինչպես նաև՝ գրանցման դույնում փոփոխություններ կատարելու դեպքում փորձաքննություն անցկացնելու ընթացքում: Գրանցման պետության լիազորված մարմնի կողմից փորձագիտական եզրակացությունը ձեւակերպելիս կատարվում է «Փորձագիտական եզրակացությունից տեղեկությունների ուղարկում» ընթացակարգը (P.MM.06.PRC.009):

Փորձագիտական եզրակացության վերաբերյալ դիտողությունների եւ առաջարկությունների առկայության դեպքում կատարվում է «Փորձագիտական եզրակացության վերաբերյալ դիտողությունների եւ առաջարկությունների ուղարկում» ընթացակարգը (P.MM.06.PRC.010):

Ճանաչման պետության լիազորված մարմնի կողմից փորձագիտական եզրակացության ճանաչումը (չճանաչումը) հաստատելու մասին որոշում կայացվելու դեպքում կատարվում է «Փորձագիտական եզրակացության ճանաչման (չճանաչման) հաստատում» ընթացակարգը (P.MM.06.PRC.011):

25. Փորձագիտական եզրակացության ուսումնասիրման ժամանակ տեղեկությունների ստացման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 5-րդ նկարում:



Նկ. 5. Փորձագիտական եզրակացության ուսումնասիրման ժամանակ տեղեկությունների ստացման ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

26. Փորձագիտական եզրակացության ուսումնասիրման ժամանակ տեղեկությունների ստացման ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 5-րդ աղյուսակում:

Փորձագիտական եզրակացության ուսումնասիրման ժամանակ
տեղեկությունների ստացման ընթացակարգերի խմբում ընդգրկված
ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.06.PRC.009	փորձագիտական եզրակացությունից տեղեկությունների ուղարկում	նախատեսված է փորձագիտական եզրակացությունից տեղեկությունները գրանցման պետության լիազորված մարմնի կողմից ճանաչման պետություններին փոխանցելու համար
P.MM.06.PRC.010	փորձագիտական եզրակացության մասին դիտողությունների եւ առաջարկությունների ուղարկում	նախատեսված է փորձագիտական եզրակացության մասին դիտողություններն ու առաջարկությունները ճանաչման պետության լիազորված մարմնի կողմից փոխանցելու համար
P.MM.06.PRC.011	փորձագիտական եզրակացության ճանաչման (չճանաչման) հաստատում	նախատեսված է ճանաչման պետության լիազորված մարմնի կողմից եզրակացության ճանաչման (չճանաչման) հաստատումը փոխանցելու համար

8. Գրանցման դոսյեում պարունակվող կամ
դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված
փաստաթղթերի ստացման ընթացակարգերի խումբ

27. Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ստացման ընթացակարգերը կատարվում են բժշկական արտադրատեսակը գրանցելիս կամ գրանցման հավաստագրի գործողության ժամանակահատվածում:

Գրանցման դոսյեում պարունակվող կամ գրանցման դոսյեի ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի փոփոխության դեպքում կատարվում է «Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի փոփոխության մասին ծանուցում» ընթացակարգը (P.MM.06.PRC.012):


Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի փոփոխության մասին ծանուցումը ճանաչման պետության լիազորված մարմնի կողմից ստանալիս կատարվում է «Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի մասին տեղեկությունների ստացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.013) կամ «Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ստացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.014):

Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի մասին տեղեկությունները ճանաչման պետության լիազորված մարմնի կողմից ստանալու անհրաժեշտության դեպքում կատարվում է «Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի մասին տեղեկությունների ստացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.013):

Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերը ճանաչման պետության լիազորված մարմնի

կողմից ստանալու անհրաժեշտության դեպքում կատարվում է «Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ստացում» ընթացակարգը (P.MM.06.PRC.014):

28. Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ստացման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 6-րդ նկարում:



Նկ. 6. Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ստացման ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

29. Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ստացման ընթացակարգերի խմբում ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 6-րդ աղյուսակում:

Գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ
 ձեւակերպված փաստաթղթերի ստացման ընթացակարգերի խմբում
 ընդգրկված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.06.PRC.012	գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի փոփոխության մասին ծանուցում	նախատեսված է բժշկական արտադրատեսակը գրանցելիս բժշկական արտադրատեսակի անվտանգության, որակի եւ արդյունավետության փորձաքննություն անցկացնելու ընթացքում գրանցման դոսյեի ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի փոփոխության մասին, ինչպես նաեւ՝ գրանցման դոսյեում պարունակվող փաստաթղթերի կազմի փոփոխության մասին ծանուցումը գրանցման պետության լիազորված մարմնի կողմից փոխանցվելու համար
P.MM.06.PRC.013	գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի մասին տեղեկությունների ստացում	նախատեսված է գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կազմի մասին տեղեկությունները ճանաչման պետության լիազորված մարմնի կողմից ստանալու համար
P.MM.06.PRC.014	գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի ստացում	նախատեսված է գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերը ճանաչման պետության լիազորված մարմնի կողմից ստանալու համար

V. Ընդհանուր գործընթացի
տեղեկատվական օբյեկտները

30. Տեղեկատվական այն օբյեկտների ցանկը, որոնց մասին կամ որոնցից ստացված տեղեկությունները փոխանցվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջև տեղեկատվական փոխգործակցության ընթացքում, բերված է 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7

Տեղեկատվական օբյեկտների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.06.BEN.001	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկություններ	գրանցման համարի եւ դիմումի մշակման կարգավիճակի, ինչպես նաեւ տրամադրված գրանցման հավաստագրի մասին տեղեկություններ

VI. Ընդհանուր գործընթացի
մասնակիցների պատասխանատվությունը

31. Տեղեկությունների ամբողջական ու ժամանակին փոխանցումն ապահովելուն առնչվող պահանջները չկատարելու համար Հանձնաժողովի՝ տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցող պաշտոնատար անձանց եւ աշխատակիցներին կարգապահական պատասխանատվության ենթարկելն իրականացվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան, իսկ անդամ պետությունների լիազորված մարմինների պաշտոնատար անձանց եւ աշխատակիցներին՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

VII. Ընդհանուր գործընթացի
տեղեկատուները եւ դասակարգիչները

32. Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը
բերված է 8-րդ աղյուսակում:

Աղյուսակ 8

Ընդհանուր գործընթացի
տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տիպը	Նկարագրությունը
1	2	3	4
P.CLS.009	չափման միավորների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է չափման միավորների ծածկագրերի եւ անվանումների ցանկը՝ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի թիվ 20 հանձնարարականին համապատասխան
P.CLS.019	աշխարհի երկրների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է երկրների անվանումների ցանկը եւ դրանց ծածկագրերը՝ ISO 3166-1 ստանդարտին համապատասխան
P.CLS.024	լեզուների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է լեզուների անվանումների ցանկը եւ դրանց ծածկագրերը՝ ISO 639-1 ստանդարտին համապատասխան
P.CLS.054	կազմակերպաիրավական ձեւերի դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է կազմակերպաիրավական ձեւերի ծածկագրերի եւ անվանումների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տիպը	Նկարագրությունը
1	2	3	4
P.CLS.064	Եվրասիական տնտեսական միության բժշկական արտադրատեսակների անվանացանկը	տեղեկատու	պարունակում է բժշկական արտադրատեսակների ցանկը՝ դրանց անվանացանկի անվանումների, ծածկագրերի եւ բժշկական արտադրատեսակների նկարագրությունների նշումով
P.MM.06.CLS.001	բժշկական արտադրատեսակի գրանցման դոսյեի ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է գրանցման դոսյեի ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.MM.06.CLS.002	բժշկական արտադրատեսակի գրանցման դոսյեում պարունակվող փաստաթղթերի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է գրանցման դոսյեում պարունակվող փաստաթղթերի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.MM.06.CLS.003	բժշկական արտադրատեսակների գրանցման հավաստագրերի կարգավիճակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է գրանցման հավաստագրերի կարգավիճակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.MM.06.CLS.004	բժշկական արտադրատեսակի գրանցման մասին դիմումի ուսումնասիրման ընթացքի հետազոտության համար կարգավիճակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է դիմումի ուսումնասիրման ընթացքի հետազոտության համար կարգավիճակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը


Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տիպը	Նկարագրությունը
1	2	3	4
P.MM.06.CLS.005	Բժշկական արտադրատեսակի գրանցման դոսյեի ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կամ բժշկական արտադրատեսակի գրանցման դոսյեում պարունակվող փաստաթղթերի տարրերի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է գրանցման դոսյեի ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերի կամ գրանցման դոսյեում պարունակվող փաստաթղթերի տարրերի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը

VIII. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը

1. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հավաքման եւ արդիականացման ընթացակարգեր

«Ստացված դիմումի մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգ (P.MM.06.PRC.001)

33. «Ստացված դիմումի մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգի (P.MM.06.PRC.001) կատարման սխեման ներկայացված է 7-րդ նկարում:



Նկ. 7. «Ստացված դիմումի մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգի (P.MM.06.PRC.001) կատարման սխեմա

34. «Ստացված դիմումի մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգը (P.MM.06.PRC.001) կատարվում է ստացված դիմումի մասին տեղեկությունները ռեֆերենտ պետության լիազորված մարմնի կողմից ստացվելիս:

35. Առաջինը կատարվում է «Ստացված դիմումի մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» գործառնությունը (P.MM.06.OPR.001), որի կատարման արդյունքներով ռեֆերենտ պետության լիազորված մարմինը կազմում է Հանձնաժողով է ուղարկում ստացված դիմումի մասին տեղեկությունները:

36. Ստացված դիմումի մասին տեղեկությունները Հանձնաժողովում ստանալիս՝ կատարվում է «Ստացված դիմումի մասին տեղեկությունների ընդունում և մշակում» գործառնությունը (P.MM.06.OPR.002), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովն ստանում է նշված տեղեկությունները,

կատարում է դրանց մշակումը եւ ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում է ուղարկում ռեֆերենտ պետության լիազորված մարմին:

37. Ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը ռեֆերենտ պետության լիազորված մարմնի կողմից ստանալիս՝ կատարվում է «Ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.MM.06.OPR.003), որի կատարման արդյունքներով ռեֆերենտ պետության լիազորված մարմինը ծանուցվում է ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին:

38. «Ստացված դիմումի մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգի (P.MM.06.PRC.001) կատարման արդյունքը ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների ստացումն է Հանձնաժողովի կողմից եւ ստացված դիմումի մասին տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ տեղեկությունների ստացումը՝ ռեֆերենտ պետության լիազորված մարմնի կողմից:

39. Ընդհանուր գործընթացի՝ «Ստացված դիմումի մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգի (P.MM.06.PRC.001) շրջանակներում կատարվող գործառնությունների ցանկը բերված է 9-րդ աղյուսակում:

Աղյուսակ 9

Ընդհանուր գործընթացի՝ «Ստացված դիմումի մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգի (P.MM.06.PRC.001) շրջանակներում կատարվող գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.MM.06.OPR.001	ստացված դիմումի վերաբերյալ	բերված է սույն

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
	տեղեկությունների փոխանցում Հանձնաժողով	Կանոնների 10-րդ աղյուսակում
P.MM.06.OPR.002	ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն Կանոնների 11-րդ աղյուսակում
P.MM.06.OPR.003	ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում	բերված է սույն Կանոնների 12-րդ աղյուսակում

Աղյուսակ 10

«Ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով»
գործառնության նկարագրություն (P.MM.06.OPR.001)

Թիվը ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.06.OPR.001
2	Գործառնության անվանումը	ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների փոխանցում Հանձնաժողով
3	Կատարողը	ռեֆերենտ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է դիմումն ստանալիս
5	Սահմանափակումները	ներկայացված տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձեւաչափերի եւ կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը կազմում է ստացված դիմումի մասին տեղեկությունները եւ դրանք ուղարկում է Հանձնաժողով՝ Լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական

Թիվը ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
		փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ստացված դիմումի մասին տեղեկություններն ուղարկվել են Հանձնաժողով

Աղյուսակ 11

«Ստացված դիմումի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում»
գործառնության (P.MM.06.OPR.002) նկարագրություն

Թիվը ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.06.OPR.002
2	Գործառնության անվանումը	ստացված դիմումի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է ստացված դիմումի մասին տեղեկություններ ստանալիս («ստացված դիմումի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» գործառնություն (P.MM.06.OPR.001))
5	Սահմանափակումները	Տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձեւաչափերի եւ կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է տեղեկությունները եւ ստուգում դրանք Լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան: Հաջող ստուգման դեպքում կատարողն իրականացնում է ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների ընդունումն ու մշակումը, լրացնում է դրանց թարմացման ամսաթիվը եւ ժամը, կազմում եւ ռեֆերենտ պետության լիազորված մարմին է ուղարկում ստացված դիմումի վերաբերյալ

Թիվը ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
		տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում՝ տեղեկությունների ավելացմանը համապատասխանող մշակման արդյունքների ծածկագրի արժեքով՝ Լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան:
7	Արդյունքները	բժշկական արտադրատեսակների մասին տեղեկությունները թարմացվել են, ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն ուղարկվել է ռեֆերենտ պետության լիազորված մարմին

Աղյուսակ 12


«Ստացված դիմումի վերաբերյալ
տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում»
գործառնության (P.MM.06.OPR.003) նկարագրություն

Թիվը ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.06.OPR.003
2	Գործառնության անվանումը	ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում
3	Կատարողը	ռեֆերենտ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը կատարողի կողմից ստացվելիս («Ստացված դիմումի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» գործառնություն (P.MM.06.OPR.002))
5	Սահմանափակումները	ներկայացված տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների

Թիվը ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
		ձեւաչափերի եւ կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է ծանուցումը եւ ստուգում դա՝ Լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ստացված դիմումի վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն ստացվել է

«Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների
ներկայացումը Հանձնաժողով» գործընթաց (P.MM.06.PRC.002)

40. «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների
ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգի (P.MM.06.PRC.002) կատարման
սխեման ներկայացված է 8-րդ նկարում:



Նկ. 8. «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգի (P.MM.06.PRC.002) կատարման սխեմա

41. «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգը (P.MM.06.PRC.002) կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ դիմումի ուսումնասիրման կարգավիճակի մասին տեղեկությունները փոփոխելիս, բժշկական արտադրատեսակի գրանցման վերաբերյալ որոշում ընդունելիս կամ գրանցման հավաստագրի մասին տեղեկությունները փոփոխելիս՝ Հանձնաժողովում

բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ պահվող տեղեկությունների արդիականացման համար:

42. Առաջին հերթին կատարվում է «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների փոխանցում» գործառնությունը (P.MM.06.OPR.004), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմինը կազմում է Հանձնաժողով է ուղարկում բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ տեղեկություններ:

43. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները Հանձնաժողովում ստանալիս՝ կատարվում է «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների ընդունում է մշակում» գործառնությունը (P.MM.06.OPR.005), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովն ընդունում է նշված տեղեկությունները, կատարում է դրանց մշակումը՝ պահպանելով փոփոխությունների պատմությունը, եւ անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում բժշկական արտադրատեսակի գրանցման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում:

44. Բժշկական արտադրատեսակի գրանցման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստացվելիս՝ կատարվում է «Բժշկական արտադրատեսակի գրանցման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.MM.06.OPR.006), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմինը մշակում է բժշկական արտադրատեսակի գրանցման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ստացված ծանուցումը:

45. «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների ընդունում է մշակում» գործառնության (P.MM.06.OPR.005) կատարման դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում տեղեկությունների հրապարակման հնարավորության ստուգում» գործառնությունը (P.MM.06.OPR.007), որի կատարման արդյունքներով բժշկական արտադրատեսակի գրանցման մասին

ստացված տեղեկությունները ստուգվում են Եվրասիական տնտեսական խորհրդի 2016 թվականի փետրվարի 12-ի թիվ 30 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում տեղեկատվական համակարգի ձևավորման ու վարման Կարգին (այսուհետ՝ Կարգ) համապատասխան՝ Միության տեղեկատվական պորտալում՝ միասնական ռեեստրում, դրանց հրապարակման հնարավորությունը որոշելու համար:

Միության տեղեկատվական պորտալում՝ միասնական ռեեստրում հրապարակման ոչ ենթակա բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստացվելու դեպքում, «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների ներկայացումը հանձնաժողով» ընթացակարգը (P.MM.06.PRC.002) ավարտվում է:

46. Միության տեղեկատվական պորտալում՝ միասնական ռեեստրում հրապարակման ենթակա բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստացվելու դեպքում կատարվում է «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների հրապարակում» ընթացակարգը (P.MM.06.OPR.008), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովն ապահովում է Միության տեղեկատվական պորտալում՝ միասնական ռեեստրում նշված տեղեկությունների հրապարակումը:

47. «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով» ընթացակարգի (P.MM.06.PRC.002) կատարման արդյունքը բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստացվելն է եւ Միության տեղեկատվական պորտալում՝ միասնական ռեեստրում, Կարգով նախատեսված ծավալով, դրանց հրապարակումը:

6	Գործառնության նկարագրություն	կատարողն ստուգում է ստացված փաստաթղթերը կամ ծանուցումը՝ Լիազորված մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան: Հաջող ստուգման դեպքում կատարողն ստանում է գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ ձեւակերպված փաստաթղթերը կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը
7	Արդյունքները	ստացվել են գրանցման դոսյեում պարունակվող կամ դրա ուսումնասիրման ժամանակ

Թիվը ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագր ությունը
1	2	3
		ձեռակերպված փաստաթղթերը կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը

IX. Գործողությունների կարգն արտակարգ իրավիճակներում

132. Ընդհանուր գործընթացի ընթացակարգեր կատարելիս հնարավոր են բացառիկ իրավիճակներ, որոնց ժամանակ տվյալների մշակումը չի կարող անցկացվել սովորական ռեժիմով: Դա կարող է տեղի ունենալ տեխնիկական խափանումների, կառուցվածքային եւ ձեւաչափային-տրամաբանական հսկողության սխալների առաջացման եւ այլ դեպքերում:

133. Կառուցվածքային եւ ձեւաչափային-տրամաբանական հսկողության սխալների առաջացման դեպքում անդամ պետության լիազորված մարմինն իրականացնում է այն հաղորդագրության ստուգումը, որի առնչությամբ ծանուցում է ստացվել սխալի մասին՝ Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձեւաչափերի եւ կառուցվածքների նկարագրությանը եւ Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների լրացմանը ներկայացվող պահանջներին համապատասխանության մասով՝ Լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին ու Լիազորված մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան, տվյալ ընդհանուր գործընթացի համար: Նշված փաստաթղթերի պահանջներին տեղեկությունների անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում անդամ պետության լիազորված մարմինն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ հայտնաբերված սխալը սահմանված կարգով վերացնելու համար:

134. Արտակարգ իրավիճակների կարգավորման նպատակով, անդամ պետությունների՝ սույն կանոններով նախատեսված պահանջների կատարումն ապահովող լիազորված մարմինները տեղեկացնում են մյուս լիազորված մարմիններին եւ Հանձնաժողովին՝ ընդհանուր գործընթացն իրագործելու ժամանակ տեխնիկական աջակցություն ապահովող պատասխանատու անձանց մասին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի օգոստոսի 30-ի
թիվ 92 որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում և օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը մշակվել է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող հետևյալ ակտերին համապատասխան՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների և բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների և կանոնների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագիր.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2016 թվականի փետրվարի 12-ի «Բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում տեղեկատվական համակարգի ձեւավորման եւ վարման կարգը հաստատելու մասին» թիվ 30 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2016 թվականի փետրվարի 12-ի «Բժշկական արտադրատեսակների գրանցման եւ անվտանգության, որակի եւ արդյունավետության փորձաքննության կանոնների մասին» թիվ 46 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Ընդհանուր գործընթացներն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» թիվ 200 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2015 թվականի հունվարի 27-ի «Արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տվյալների էլեկտրոնային փոխանակման կանոնները հաստատելու մասին» թիվ 5 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 29 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի՝ 2015 թվականի հունիսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայի մասին» թիվ 63 որոշում.

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում բժշկական արտադրատեսակների (բժշկական նշանակության արտադրատեսակների եւ բժշկական տեխնիկայի) շրջանառության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին համաձայնագրի իրագործման վերաբերյալ» թիվ 109 որոշում:

II. Կիրառության ոլորտը

2. Սույն կանոնակարգը մշակվել է ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) տրանզակցիաների կատարման կարգի եւ պայմանների, ինչպես նաեւ դրանց կատարման մեջ իրենց դերի միատեսակ ընկալումն ապահովելու նպատակով:

3. Սույն կանոնակարգով սահմանվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջեւ տեղեկատվական փոխգործակցության իրագործմանն անմիջականորեն ուղղված՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների կատարման կարգին եւ պայմաններին ներկայացվող պահանջները:

4. Սույն կանոնակարգը կիրառվում է ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից՝ ընդհանուր գործընթացի շրջանակներում ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգը հսկելու ժամանակ, ինչպես նաեւ այդ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչների նախագծման, մշակման եւ լրամշակման ժամանակ:

III. Հիմնական հասկացությունները

5. Սույն կանոնակարգի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

«խսկորոշում»՝ սուբյեկտին իր կողմից ներկայացված նույնականացուցչի պատկանելության հասանելիության ստուգում, դրա իսկության հաստատում.

«էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայման»՝ էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) տվյալների միավոր, որը որոշակի համատեքստում համարվում է անտրոհելի.

«ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վիճակ»՝ հատկություն, որն ընդհանուր գործընթացի ընթացակարգի կատարման որոշակի փուլում բնութագրում է տեղեկատվական օբյեկտը եւ որը փոփոխվում է ընդհանուր գործընթացի գործառնությունները կատարելիս.

«նախաձեռնող», «սկզբնավորող գործառնություն», «ընդունող գործառնություն», «ռեսպոնդենտ», «ընդհանուր գործընթացի հաղորդագրություն» եւ «ընդհանուր գործընթացի տրանզակցիա» հասկացությունները սույն կանոնակարգում օգտագործվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայով սահմանված իմաստներով:

Սույն կանոնակարգում օգտագործվող մյուս հասկացությունները կիրառվում են Տեղեկատվական փոխգործակցության կանոնների 4-րդ կետում սահմանված իմաստներով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի օգոստոսի 30-ի թիվ 92 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի

ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրականացնելիս (այսուհետ՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոններ):

IV. Ընդհանուր գործընթացի շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության մասին հիմնական տեղեկությունները

1. Տեղեկատվական փոխգործակցության մասնակիցները

6. Ընդհանուր գործընթացի շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության մասնակիցների դերերի ցանկը բերված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Տեղեկատվական փոխգործակցության մասնակիցների դերերի ցանկ

Դերի անվանումը	Դերի նկարագրությունը	Դերը կատարող մասնակիցը
1	2	3
Տեղեկությունների տիրապետողը	ներկայացնում է բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովում բժշկական արտադրատեսակների գրանցման մասին պահվող տեղեկությունների ձեւավորման ու արդիականացման եւ Միության տեղեկատվական պորտալում միասնական ռեեստրի հրապարակման համար, տեղեկությունների հարցում է կատարում բժշկական արտադրատեսակների գրանցման մասին, հարցում է ուղարկում արտաքին եւ փոխադարձ	Միության անդամ պետության լիազորված մարմին (P.MM.06.ACT.001), ռեֆերենտ պետության լիազորված մարմին (P.MM.06.ACT.002)

Դերի անվանումը	Դերի նկարագրությունը	Դերը կատարող մասնակիցը
1	2	3
	առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցով եւ տեղեկություններ է ստանում բժշկական արտադրատեսակների գրանցման մասին	
Համակարգող	պատասխանատու է բժշկական արտադրատեսակների մասին տեղեկությունների ձեւավորման ու արդիականացման համար եւ ապահովում է արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով նշված տեղեկություններին հասանելիությունը, հրապարակում է միասնական ռեեստրի տեղեկությունները Միության տեղեկատվական պորտալում	Եվրասիական տնտեսական հանձնաժողով (P.ACT.001)


2.Տեղեկատվական փոխգործակցության կառուցվածքը

7. Ընդհանուր գործընթացի շրջանակներում տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է Միության անդամ պետությունների լիազորված մարմինների (այսուհետ՝ անդամ պետությունների լիազորված մարմիններ) եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերին համապատասխան՝

տեղեկատվական փոխգործակցություն՝ բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները հավաքելիս եւ արդիականացնելիս.

տեղեկատվական փոխգործակցություն՝ բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները ներկայացնելիս:

Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կառուցվածքը ներկայացված է 1-ին նկարում:



Նկ. 1. Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կառուցվածքը

8. Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցությունն իրագործվում է ընդհանուր գործընթացի շրջանակներում: Ընդհանուր գործընթացի կառուցվածքը սահմանված է Տեղեկատվական փոխգործակցության կանոններում:

9. Տեղեկատվական փոխգործակցությամբ սահմանվում է ընդհանուր գործընթացի տրանզակցիաների կատարման կարգը, որոնցից յուրաքանչյուրը հաղորդագրությունների փոխանակում է՝ ընդհանուր գործընթացի մասնակիցների միջեւ ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վիճակների սինքրոնացման նպատակով: Յուրաքանչյուր տեղեկատվական փոխգործակցության համար փոխադարձ կապեր են սահմանված՝ գործառնությունների եւ այդ գործառնություններին համապատասխանող ընդհանուր գործընթացի տրանզակցիաների միջեւ:

10. Ընդհանուր գործընթացի տրանզակցիա կատարելիս՝ նախաձեռնողն իր կողմից իրականացվող գործառնության (սկզբնավորող գործառնության) շրջանակներում ռեսպոնդենտին հաղորդագրություն-հարցում է ուղարկում, որին ի պատասխան ռեսպոնդենտն իր կողմից իրականացվող գործառնության (ընդունող գործառնության) շրջանակներում կարող է հաղորդագրություն-պատասխան ուղարկել կամ չուղարկել՝ կախված ընդհանուր գործընթացի տրանզակցիայի ձևանմուշից: Հաղորդագրության կազմում տեղեկությունների կառուցվածքը պետք է համապատասխանի Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձևաչափերի եւ կառուցվածքների նկարագրությանը, որն օգտագործվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի օգոստոսի 30-ի թիվ 92 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի շրջանակներում գրանցված բժշկական արտադրատեսակների միասնական ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեստրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար (այսուհետ՝ Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձևաչափերի եւ կառուցվածքների նկարագրություն):


11. Ընդհանուր գործընթացի տրանզակցիաները կատարվում են ընդհանուր գործընթացի տրանզակցիաների տրված պարամետրերին համապատասխան՝ ինչպես դա սահմանված է սույն կանոնակարգով:

V. Տեղեկատվական փոխգործակցություն՝ ընթացակարգերի խմբերի շրջանակներում

1. Տեղեկատվական փոխգործակցություն՝ բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները հավաքելիս եւ արդիականացնելիս

12. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հավաքման եւ արդիականացման ժամանակ ընդհանուր գործընթացի տրանզակցիաների կատարման սխեման ներկայացված է 2-րդ նկարում:

Ընդհանուր գործընթացի յուրաքանչյուր ընթացակարգի համար 2-րդ աղյուսակում բերված է ընդհանուր գործընթացի գործառնությունների, տեղեկատվական օբյեկտների միջանկյալ ու վերջնական վիճակների եւ ընդհանուր գործընթացի սրանգակցիաների միջեւ կապը:



Նկ. 2. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հավաքման եւ արդիականացման ժամանակ ընդհանուր գործընթացի սրանգակցիաների կատարման սխեմա

Ընդհանուր գործընթացի տրանզակցիաների կատարման ցանկը՝ բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները հավաքելիս եւ արդիականացնելիս


Թիվ՝ ը/կ	Նախաձեռնողի կողմից կատարվող գործառնություն	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի միջանկյալ վիճակը	Ռեսպոնդենտի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վերջնական վիճակը	Ընդհանուր գործընթացի տրանզակցիան
1	2	3	4	5	6
1	ստացված դիմումի մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով (P.MM.06.PRC.001)				
1.1	Ստացված դիմումի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով (P.MM.06.OPR.001) Ստացված դիմումի մասին տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում (P.MM.06.OPR.003)	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները՝ (P.MM.06.BEN.001) ստացված դիմումի մասին տեղեկությունները փոխանցվել են	ստացված դիմումի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում (P.MM.06.OPR.002)	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկություններ՝ (P.MM.06.BEN.001) թարմացվել են	ստացված դիմումի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով (P.MM.06.TRN.001)
2	բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների ներկայացումը Հանձնաժողով (P.MM.06.PRC.002)				
2.1	Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների փոխանցում	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին	բժշկական արտադրատեսակի գրանցման մասին	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին	բժշկական արտադրատեսակի գրանցման մասին

Թիվ՝ ը/կ	Նախաձեռնողի կողմից կատարվող գործառնություն	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի միջանկյալ վիճակը	Ռեսպոնդենտի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վերջնական վիճակը	Ընդհանուր գործընթացի տրանզակցիան
1	2	3	4	5	6
	(P.MM.06.OPR.004) Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում (P.MM.06.OPR.006)	տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները փոխանցվել են	տեղեկությունների ընդունում եւ մշակում (P.MM.06.OPR.005)	տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ թարմացվել են	տեղեկությունների փոխանցում բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով (P.MM.06.TRN.002)
3	Դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունների ներկայացումը հանձնաժողով (P.MM.06.PRC.003)				

Թիվ՝ ը/կ	Նախաձեռնողի կողմից կատարվող գործառնություն	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի միջանկյալ վիճակը	Ռեսպոնդենտի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վերջնական վիճակը	Ընդհանուր գործընթացի տրանզակցիան
1	2	3	4	5	6
3.1	<p>Դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով (P.MM.06.OPR.009):</p> <p>Դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում (P.MM.06.OPR.011)</p>	<p>բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)</p> <p>բացառելու համար տեղեկությունները փոխանցվել են</p>	<p>դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում (P.MM.06.OPR.010)</p>	<p>բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)</p> <p>թարմացվել են</p>	<p>դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով (P.MM.06.TRN.003)</p>

2. Տեղեկատվական փոխգործակցություն՝ բժշկական
արտադրատեսակների գրանցման մասին
տեղեկությունները ներկայացնելիս

13. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ներկայացման ժամանակ ընդհանուր գործընթացի տրանզակցիաների կատարման սխեման ներկայացված է 3-րդ նկարում: Ընդհանուր գործընթացի յուրաքանչյուր ընթացակարգի համար 3-րդ աղյուսակում բերված է ընդհանուր գործընթացի գործառնությունների, տեղեկատվական օբյեկտների միջանկյալ ու վերջնական վիճակների եւ ընդհանուր գործընթացի տրանզակցիաների միջեւ կապը:



Նկ. 3. Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ներկայացման ժամանակ ընդհանուր գործընթացի տրանզակցիաների կատարման սխեմա

Ընդհանուր գործընթացի տրանզակցիաների ցանկը՝
բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները ներկայացնելիս

Թիվը՝ ը/կ	Նախաձեռնողի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի միջանկյալ վիճակը	Ռեսպոնդենտի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վերջնական վիճակը	Ընդհանուր գործընթացի տրանզակցիան
1	2	3	4	5	6
1	Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության ստացում (P.MM.06.PRC.004)				
1.1	Բժշկական արտադրատեսակների մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության հարցում (P.MM.06.OPR.012): Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ	Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ թարմացման ամսաթիվը եւ ժամը հարցվել են	Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության պատրաստում ու ներկայացում (P.MM.06.OPR.013)	Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ թարմացման ամսաթիվը եւ ժամը ներկայացվել են	Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության ստացում (P.MM.06.TRN.004)

Թիվը՝ ը/կ	Նախաձեռնողի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի միջանկյալ վիճակը	Ռեսպոնդենտի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վերջնական վիճակը	Ընդհանուր գործընթացի տրանզակցիան
1	2	3	4	5	6
	տեղեկատվության ընդունում ու մշակում (P.MM.06.OPR.014)				
2	Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացում (P.MM.06.PRC.005)				
2.1	Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հարցում: (P.MM.06.OPR.015) Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ընդունում ու մշակում (P.MM.06.OPR.017)	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները՝ (P.MM.06.BEN.001) տեղեկությունները հարցվել են	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների պատրաստում եւ ներկայացում (P.MM.06.OPR.016)	բժշկական արտադրատեսակնե րի գրանցման մասին տեղեկություններ (P.MM.06.BEN.001) տեղեկությունները բացակայում են: Բժշկական արտադրատեսակնե րի գրանցման մասին տեղեկություններ (P.MM.06.BEN.001) տեղեկությունները ներկայացվել են	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացում (P.MM.06.TRN.005)
3	Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ստացում (P.MM.06.PRC.006)				

Թիվը՝ ը/կ	Նախաձեռնողի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի միջանկյալ վիճակը	Ռեսպոնդենտի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վերջնական վիճակը	Ընդհանուր գործընթացի տրանզակցիան
1	2	3	4	5	6
3.1	Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների հարցում (P.MM.06.OPR.018): Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ընդունում եւ մշակում (P.MM.06.OPR.020)	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկություններ (P.MM.06.BEN.001)՝ փոփոխված տեղեկությունները հարցվել են	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների պատրաստում եւ ներկայացում (P.MM.06.OPR.019)	բժշկական արտադրատեսակնե րի գրանցման մասին տեղեկություններ (P.MM.06.BEN.001)՝ փոփոխված տեղեկությունները բացակայում են: Բժշկական արտադրատեսակնե րի գրանցման մասին տեղեկություններ (P.MM.06.BEN.001)՝ փոփոխված տեղեկությունները ներկայացվել են	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ստացում (P.MM.06.TRN.006)
4	Գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացում (P.MM.06.PRC.007)				

Թիվը՝ ը/կ	Նախաձեռնողի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի միջանկյալ վիճակը	Ռեսպոնդենտի կողմից կատարվող գործառնությունը	Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վերջնական վիճակը	Ընդհանուր գործընթացի տրանզակցիան
1	2	3	4	5	6
4.1	<p>Գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների հարցում (P.MM.06.OPR.021):</p> <p>Գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում (P.MM.06.OPR.023)</p>	<p>բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ գրանցման հավաստագրի համարը հարցվել է</p>	<p>գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների պատրաստում եւ ներկայացում (P.MM.06.OPR.022)</p>	<p>բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները՝ (P.MM.06.BEN.001)՝ գրանցման հավաստագրի համարը ստացվել է</p>	<p>գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացում (P.MM.06.TRN.007)</p>

VI. Ընդհանուր գործընթացի հաղորդագրությունների նկարագրությունը

14. Ընդհանուր գործընթացն իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում փոխանցվող՝ ընդհանուր գործընթացի հաղորդագրությունների ցանկը բերված է 4-րդ աղյուսակում: Հաղորդագրության կազմում տվյալների կառուցվածքը պետք է համապատասխանի Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձևաչափերի եւ կառուցվածքների նկարագրությանը: Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձևաչափերի եւ կառուցվածքների նկարագրության մեջ համապատասխան կառուցվածքին հղումը սահմանվում է ըստ 4-րդ աղյուսակի 3-րդ սյունակի արժեքի:

Աղյուսակ 4

Ընդհանուր գործընթացի հաղորդագրությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) կառուցվածքը
1	2	3
P.MM.06.MSG.001	ստացված դիմումի մասին տեղեկությունները	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (R.HC.MM.06.001)
P.MM.06.MSG.002	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (R.HC.MM.06.001)
P.MM.06.MSG.003	դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունները	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (R.HC.MM.06.001)


Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) կառուցվածքը
1	2	3
P.MM.06.MSG.004	տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը	մշակման արդյունքի մասին ծանուցումը (R.006)
P.MM.06.MSG.005	բժշկական արտադրատեսակների մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության հարցում	ընդհանուր ռեսուրսի արդիականացման վիճակ (R.007)
P.MM.06.MSG.006	բժշկական արտադրատեսակների մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվությունը	ընդհանուր ռեսուրսի արդիականացման վիճակ (R.007)
P.MM.06.MSG.007	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հարցում	ընդհանուր ռեսուրսի արդիականացման վիճակ (R.007)
P.MM.06.MSG.008	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (R.HC.MM.06.001)
P.MM.06.MSG.009	տեղեկությունների բացակայության մասին ծանուցում	մշակման արդյունքի մասին ծանուցումը (R.006)
P.MM.06.MSG.010	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների հարցում	ընդհանուր ռեսուրսի արդիականացման վիճակ (R.007)
P.MM.06.MSG.011	բժշկական արտադրատեսակի գրանցման մասին փոփոխված տեղեկությունները	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (R.HC.MM.06.001)

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) կառուցվածքը
1	2	3
P.MM.06.MSG.012	գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների հարցում	բժշկական արտադրատեսակի գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկություններ (R.HC.MM.06.004)
P.MM.06.MSG.013	գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկություններ	բժշկական արտադրատեսակի գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկություններ (R.HC.MM.06.004)

VII. Ընդհանուր գործընթացի տրանզակցիաների նկարագրությունը

1. Ընդհանուր գործընթացի՝ «Ստացված դիմումի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիա (P.MM.06.TRN.001)

15. Ընդհանուր գործընթացի՝ «Ստացված դիմումի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիան (P.MM.06.TRN.001) կատարվում է ռեսպոնդենտին համապատասխան տեղեկություններ փոխանցելու համար: Ընդհանուր գործընթացի նշված տրանզակցիայի կատարման սխեման ներկայացված է 4-րդ նկարում: Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը բերված են 5-րդ աղյուսակում:



Նկ. 4. Ընդհանուր գործընթացի «Ստացված դիմումի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիայի (P.MM.06.TRN.001) կատարման սխեմա

Աղյուսակ 5

Ընդհանուր գործընթացի՝ «Ստացված դիմումի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիայի (P.MM.06.TRN.001) նկարագրությունը


Թիվը՝ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.06.TRN.001
2	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի անվանումը	ստացված դիմումի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով
3	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի ձեւանմուշը	հարցում/պատասխան
4	Սկզբնավորող դեր	նախաձեռնող
5	Սկզբնավորող գործառնություն	ստացված դիմումի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով
6	Արձագանքող դերը	ռեսպոնդենտ
7	Ընդունող գործառնություն	ստացված դիմումի մասին տեղեկությունների

Թիվը՝ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
		ընդունում եւ մշակում
8	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի կատարման արդյունքը	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ թարմացվել են
9	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը՝	
	ստացումը հաստատելու համար ժամանակը	–
	մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակը	20 րոպե
	պատասխանին սպասելու ժամանակը	1 ժամ
	ավտորիզացման հատկանիշը	այո
10	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունները՝	
	սկզբնավորող հաղորդագրություն	ստացված դիմումի մասին տեղեկությունները (P.MM.06.MSG.001)
	պատասխան հաղորդագրություն	տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում (P.MM.06.MSG.004)
11	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունների պարամետրերը՝	
	ԷԹՍ-ի հատկանիշը	ոչ՝ P.MM.06.MSG.001-ի համար (բացառությամբ այն դեպքերի, երբ ընդհանուր գործընթացի շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության իրականացման ժամանակ ԷԹՍ-ի կիրառումը նախատեսված է Հանձնաժողովի կողմից որոշմամբ)
	ոչ ճշգրիտ ԷԹՍ-ով	–

Թիվը՝ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
	Էլեկտրոնային փաստաթղթի փոխանցում	

2. Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիա (P.MM.06.TRN.002)

16. Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիան (P.MM.06.TRN.002) կատարվում է ռեսպոնդենտին համապատասխան տեղեկություններ փոխանցելու համար: Ընդհանուր գործընթացի նշված տրանզակցիայի կատարման սխեման ներկայացված է 5-րդ նկարում: Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը բերված են 6-րդ աղյուսակում:



Նկ. 5. Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիայի (P.MM.06.TRN.002) կատարման սխեմա

Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիայի
(P.MM.06.TRN.002) նկարագրություն


Թիվ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.06.TRN.002
2	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի անվանումը	բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով
3	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի ձևանմուշը	հարցում/պատասխան
4	Սկզբնավորող դեր	նախաձեռնող
5	Սկզբնավորող գործառնություն	բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների փոխանցում
6	Արձագանքող դերը	ռեսպոնդենտ
7	Ընդունող գործառնություն	բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
8	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի կատարման արդյունքը	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ թարմացվել են
9	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը՝	
	ստացումը հաստատելու համար ժամանակը	–
	մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակը	20 րոպե
	պատասխանին սպասելու ժամանակը	1 ժամ
	ավտորիզացման հատկանիշը	այո
	կրկնությունների քանակը	3

Թիվ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
10	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունները՝	
	սկզբնավորող հաղորդագրություն	բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.MSG.002)
	պատասխան հաղորդագրություն	տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում (P.MM.06.MSG.004)
11	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունների պարամետրերը	
	ԷԹՍ-ի հատկանիշը	<p>նչ՝ P.MM.06.MSG.002-ի համար (բացառությամբ այն դեպքերի, երբ ընդհանուր գործընթացի շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության իրականացման ժամանակ ԷԹՍ-ի կիրառումը նախատեսված է Հանձնաժողովի կոլեգիայի որոշմամբ)</p> <p>նչ՝ P.MM.06.MSG.004-ի համար</p>
	նչ ճշգրիտ ԷԹՍ-ով էլեկտրոնային փաստաթղթի փոխանցում	–

3. Ընդհանուր գործընթացի «Դիմումի սումմասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիա (P.MM.06.TRN.003)

17. Ընդհանուր գործընթացի՝ «Դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիան (P.MM.06.TRN.003) կատարվում է ռեսպոնդենտին համապատասխան տեղեկություններ փոխանցելու համար: Ընդհանուր գործընթացի նշված

տրանզակցիայի կատարման սխեման ներկայացված է 6-րդ նկարում: Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը բերված են 7-րդ աղյուսակում:



Նկ. 6. Ընդհանուր գործընթացի՝ «Ռեզյուլտատների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիայի (P.MM.06.TRN.003) կատարման սխեմա

Աղյուսակ 7

Ընդհանուր գործընթացի՝ «Ռեզյուլտատների փոխանցումը Հանձնաժողով» տրանզակցիայի (P.MM.06.TRN.003) նկարագրություն


Թիվ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագր ությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.06.TRN.003
2	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի անվանումը	Պահանջարկի մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով
3	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի ձևանմուշը	հարցում/պատասխան
4	Սկզբնավորող դեր	Նախաձեռնող

Թիվ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագր ությունը
1	2	3
5	Սկզբնավորող գործառնություն	դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունների փոխանցումը Հանձնաժողով
6	Արձագանքող դերը	ռեսպոնդենտ
7	Ընդունող գործառնություն	դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
8	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի կատարման արդյունքը	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ թարմացվել են
9	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը	
	ստացումը հաստատելու համար ժամանակը	–
	մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակը	20 րոպե
	պատասխանին սպասելու ժամանակը	1 ժամ
	ավտորիզացման հատկանիշը	այո
	կրկնությունների քանակը	3
10	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունները՝	
	սկզբնավորող հաղորդագրություն	դիմումի ուսումնասիրումը դադարեցնելու մասին տեղեկությունները (P.MM.06.MSG.003)
	պատասխան հաղորդագրություն	տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում (P.MM.06.MSG.004)
11	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունների պարամետրերը՝	

Թիվ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագր ությունը
1	2	3
	ԷԹՍ-ի հատկանիշը	<p>նչ՝ P.MM.06.MSG.003-ի համար (բացառությամբ այն դեպքերի, երբ ընդհանուր գործընթացի շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության իրականացման ժամանակ ԷԹՍ-ի կիրառումը նախատեսված է Հանձնաժողովի կոլեգիայի որոշմամբ)</p> <p>նչ՝ P.MM.06.MSG.004-ի համար</p>
	նչ ճշգրիտ ԷԹՍ-ով էլեկտրոնային փաստաթղթի փոխանցում	–

4.Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության ստացում» տրանզակցիա (P.MM.06.TRN.004)

18. Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակների գրանցման վերաբերյալ տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» տրանզակցիան (P.MM.06.TRN.004) կատարվում է նախաձեռնողի հարցմամբ՝ ռեսպոնդենտի կողմից համապատասխան տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվություն ներկայացնելու համար: Ընդհանուր գործընթացի նշված տրանզակցիայի կատարման սխեման ներկայացված է 7-րդ նկարում: Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը բերված են 8-րդ աղյուսակում:



Նկ. 7. Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի և ժամի վերաբերյալ տեղեկատվության ստացում» տրանզակցիայի (P.MM.06.TRN.004) կատարման սխեմա

Աղյուսակ 8

Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի և ժամի վերաբերյալ տեղեկատվության ստացում» տրանզակցիայի (P.MM.06.TRN.004) նկարագրություն


Թիվ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.06.TRN.004
2	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի անվանումը	Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի և ժամի վերաբերյալ տեղեկատվության ստացում
3	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի ձևանմուշը	հարցում/պատասխան
4	Սկզբնավորող դեր	նախաձեռնող

Թիվ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
5	Սկզբնավորող գործառնություն	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության հարցում եւ ստացում
6	Արձագանքող դերը	ռեսպոնդենտ
7	Ընդունող գործառնություն	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում
8	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի կատարման արդյունքը	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ թարմացման ամսաթիվը եւ ժամը ներկայացվել են
9	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը՝	
	ստացումը հաստատելու համար ժամանակը	–
	մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակը	–
	պատասխանին սպասելու ժամանակը	1 ժամ
	ավտորիզացման հատկանիշը	այո
	կրկնությունների քանակը	3
10	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունները՝	
	սկզբնավորող հաղորդագրություն	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվության հարցում (P.MM.06.MSG.005)
	պատասխան	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների թարմացման

Թիվ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
	հաղորդագրություն	ամսաթվի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվություն (P.MM.06.MSG.006)
11	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունների պարամետրերը՝	
	ԷԹՍ-ի հատկանիշը	ոչ
	ոչ ճշգրիտ ԷԹՍ-ով էլեկտրոնային փաստաթղթի փոխանցում	–

5. Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացում» տրանզակցիա (P.MM.06.TRN.005)

19. Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացում» տրանզակցիան (P.MM.06.TRN.005) կատարվում է նախաձեռնողի հարցմամբ ռեսպոնդենտի կողմից համապատասխան տեղեկություններ ներկայացնելու համար: Ընդհանուր գործընթացի նշված տրանզակցիայի կատարման սխեման ներկայացված է 8-րդ նկարում: Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը բերված են 9-րդ աղյուսակում:



Նկ. 8. Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացում» տրանզակցիայի (P.MM.06.TRN.005) կատարման սխեմա

Աղյուսակ 9

Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկությունների ստացում» տրանզակցիայի (P.MM.06.TRN.005) նկարագրություն


Թիվը ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.06.TRN.005
2	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի անվանումը	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ստացում
3	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի ձևանմուշը	հարցում/պատասխան
4	Սկզբնավորող դեր	նախաձեռնող
5	Սկզբնավորող գործառնություն	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հարցում եւ ստացում

Թիվը ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
6	Արձագանքող դերը	ռեսպոնդենտ
7	Ընդունող գործառնություն	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների ներկայացում
8	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի կատարման արդյունքը	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ տեղեկությունները բացակայում են
		բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ տեղեկությունները ներկայացվել են
9	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը	
	ստացումը հաստատելու համար ժամանակը	–
	մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակը	20 րոպե
	պատասխանին սպասելու ժամանակը	1 ժամ
	ավտորիզացման հատկանիշը	այո
	կրկնությունների քանակը	3
10	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունները՝	
	սկզբնավորող հաղորդագրություն	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունների հարցում (P.MM.06.MSG.007)
	պատասխան հաղորդագրություն	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.MSG.008)
		տեղեկությունների բացակայության մասին ծանուցում (P.MM.06.MSG.009)
11	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի	

Թիվը ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
	հաղորդագրությունների պարամետրերը	
	ԷԹՍ-ի հատկանիշը	ոչ
	ոչ ճշգրիտ ԷԹՍ-ով էլեկտրոնային փաստաթղթի փոխանցում	–

6. Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ստացում» տրանզակցիա (P.MM.06.TRN.006)

20. Ընդհանուր գործընթացի՝ «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ստացում» տրանզակցիան (P.MM.06.TRN.006) կատարվում է նախաձեռնողի հարցմամբ ռեսպոնդենտի կողմից համապատասխան տեղեկություններ ներկայացնելու համար: Ընդհանուր գործընթացի նշված տրանզակցիայի կատարման սխեման ներկայացված է 9-րդ նկարում: Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը բերված են 10-րդ աղյուսակում:



Նկ. 9. Ընդհանուր գործընթացի՝ «Քժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ստացում» տրանզակցիայի (P.MM.06.TRN.006) կատարման սխեմա

Աղյուսակ 10

Ընդհանուր գործընթացի՝ «Քժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ստացում» տրանզակցիայի (P.MM.06.TRN.006) նկարագրություն


Թիվը ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.06.TRN.006
2	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի անվանումը	Քժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ստացում
3	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի ձևանմուշը	հարցում/պատասխան

Թիվը՝ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
4	Սկզբնավորող դեր	նախաձեռնող
5	Սկզբնավորող գործառնություն	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների հարցում եւ ստացում
6	Արձագանքող դերը	ռեսպոնդենտ
7	Ընդունող գործառնություն	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների ներկայացում
8	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի կատարման արդյունքը	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ փոփոխված տեղեկությունները բացակայում են
		բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ փոփոխված տեղեկությունները ներկայացվել են
9	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը՝	
	ստացումը հաստատելու համար ժամանակը	–
	մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակը	20 րոպե
	պատասխանին սպասելու ժամանակը	1 ժամ
	ավտորիզացման հատկանիշը	այո
	կրկնությունների քանակը	3
10	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունները՝	
	սկզբնավորող հաղորդագրություն	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկությունների հարցում (P.MM.06.MSG.010)

Թիվը՝ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
	պատասխան հաղորդագրություն	տեղեկությունների բացակայության մասին ծանուցում (P.MM.06.MSG.009)
		բժշկական արտադրատեսակների գրանցման մասին փոփոխված տեղեկություններ (P.MM.06.MSG.011)
11	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունների պարամետրերը՝	
	ԷԹՄ-ի հասկանիշը	ոչ
	ոչ ճշգրիտ ԷԹՄ-ով էլեկտրոնային փաստաթղթի փոխանցում	–

7. Ընդհանուր գործընթացի՝ «Գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացում» տրանզակցիա (P.MM.06.TRN.007)

21. Ընդհանուր գործընթացի «Գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացում» (P.MM.06.TRN.007) տրանզակցիան կատարվում է նախաձեռնողի հարցմամբ ռեսպոնդենտի կողմից համապատասխան տեղեկություններ ներկայացնելու համար: Ընդհանուր գործընթացի նշված տրանզակցիայի կատարման սխեման ներկայացված է 10-րդ նկարում: Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը բերված են 11-րդ աղյուսակում:



Նկ. 10. Ընդհանուր գործընթացի՝ «Գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացում» տրանզակցիայի (P.MM.06.TRN.007) կատարման սխեմա

Աղյուսակ 11

Ընդհանուր գործընթացի՝ «Գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացում» տրանզակցիայի (P.MM.06.TRN.007) նկարագրություն

Թիվը՝ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.MM.06.TRN.007
2	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի անվանումը	գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ստացում
3	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի ձևանմուշ	հարցում/պատասխան
4	Սկզբնավորող դեր	Նախաձեռնող
5	Սկզբնավորող գործառնություն	գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների հարցում եւ ստացում
6	Արձագանքող դերը	ռեսպոնդենտ

Թիվը՝ ը/կ	Պարտադիր տարրը	Նկարագրությունը
1	2	3
7	Ընդունող գործառնություն	գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների ներկայացում
8	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի կատարման արդյունքը	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկությունները (P.MM.06.BEN.001)՝ գրանցման հավաստագրի համարը ստացվել է
9	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի պարամետրերը՝	
	ստացումը հաստատելու համար ժամանակը	–
	մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակը	1 րոպե
	պատասխանին սպասելու ժամանակը	5 րոպե
	ավտորիզացման հատկանիշը	այո
	կրկնությունների քանակը	2
10	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունները՝	
	սկզբնավորող հաղորդագրություն	գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկությունների հարցում (P.MM.06.MSG.012)
	պատասխան հաղորդագրություն	գրանցման հավաստագրի համարի մասին տեղեկություններ (P.MM.06.MSG.013)
11	Ընդհանուր գործընթացի տրանզակցիայի հաղորդագրությունների պարամետրերը՝	
	ԷԹՄ-ի հատկանիշը	ոչ
	ոչ ճշգրիտ ԷԹՄ-ով էլեկտրոնային փաստաթղթի փոխանցում	–

VIII. Արտակարգ իրավիճակներում գործողությունների կարգը

22. Ընդհանուր գործընթացի շրջանակներում տեղեկատվական փոխգործակցության ժամանակ հնարավոր են այնպիսի արտակարգ իրավիճակներ, երբ տվյալների մշակումը չի կարող կատարվել սովորական ռեժիմով: Արտակարգ իրավիճակներն առաջանում են տեխնիկական խափանումների, սպասման ժամանակը լրանալու եւ այլ դեպքերում: Ընդհանուր գործընթացի մասնակցի կողմից արտակարգ իրավիճակի առաջացման պատճառների մասին մեկնաբանություններ եւ այն լուծելու վերաբերյալ հանձնարարականներ ստանալու համար նախատեսված է համապատասխան հարցումը արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի աջակցության ծառայությունն ուղարկելու հնարավորությունը: Արտակարգ իրավիճակի լուծման վերաբերյալ ընդհանուր հանձնարարականները բերված են 12-րդ աղյուսակում:

23. Անդամ պետության լիազորված մարմինն անցկացնում է Էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձեւաչափերի եւ կառուցվածքների նկարագրությանը եւ սույն կանոնակարգի IX բաժնում նշված՝ հաղորդագրությունների հսկմանը ներկայացվող պահանջներին այն հաղորդագրության համապատասխանության ստուգումը, որի հետ կապված, ստացվել է սխալի մասին ծանուցումը: Նշված պահանջներին անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում անդամ պետության լիազորված մարմինը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հայտնաբերված սխալը վերացնելու համար: Անհամապատասխանություն չհայտնաբերելու դեպքում անդամ պետության լիազորված մարմինն այդ արտակարգ իրավիճակի նկարագրությամբ հաղորդագրություն է ուղարկում արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի աջակցության ծառայություն:

Գործողություններն արտակարգ
իրավիճակների ժամանակ

Արտակարգ իրավիճակի ծածկագիրը	Արտակարգ իրավիճակի նկարագրությունը	Արտակարգ իրավիճակի պատճառները	Արտակարգ իրավիճակի առաջացման դեպքում գործողությունների նկարագրությունը
1	2	3	4
P.EXC.002	ընդհանուր գործընթացի երկկողմ տրանզակցիայի նախաձեռնող հաղորդագրություն- պատասխան չի ստացվել կրկնությունների համաձայնեցված քանակը լրանալուց հետո	տրանսպորտային համակարգում տեխնիկական խափանումները կամ ծրագրային ապահովման համակարգային սխալը	անհրաժեշտ է հարցում ուղարկել անդամ պետության ազգային հատվածի տեխնիկական աջակցման ծառայություն, որտեղ ձեռավորվել է հաղորդագրությունը
P.EXC.004	ընդհանուր գործընթացի տրանզակցիայի նախաձեռնողն ստացել է սխալի մասին ծանուցումը	տեղեկատուներն ու դասակարգիչները չեն սինքրոնացվել կամ էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների) XML սխեմաները չեն թարմացվել	ընդհանուր գործընթացի տրանզակցիայի նախաձեռնողին անհրաժեշտ է սինքրոնացնել օգտագործվող տեղեկատուներն ու դասակարգիչները կամ թարմացնել էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների) XML սխեմաները: Եթե տեղեկատուներն ու դասակարգիչները սինքրոնացվել են, էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների) XML սխեմաները թարմացվել են, ապա անհրաժեշտ է

Արտակարգ իրավիճակի ծածկագիրը	Արտակարգ իրավիճակի նկարագրությունը	Արտակարգ իրավիճակի պատճառները	Արտակարգ իրավիճակի առաջացման դեպքում գործողությունների նկարագրությունը
1	2	3	4
			հարցում ուղարկել ընդունող մասնակցի աջակցման ծառայություն

IX. Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների լրացմանը ներկայացվող պահանջները

24. «Ստացված դիմումի մասին տեղեկություններ» (P.MM.06.MSG.001) հաղորդագրության մեջ փոխանցվող «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկություններ» (R.HC.MM.06.001) Էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների) վավերապայմանների լրացմանը ներկայացվող պահանջները բերված են 13-րդ աղյուսակում:

Աղյուսակ 13

«Ստացված դիմումի մասին տեղեկություններ» (P.MM.06.MSG.001)
 հաղորդագրության մեջ փոխանցվող «Բժշկական արտադրատեսակների
 գրանցման մասին տեղեկություններ» (R.HC.MM.06.001)
 Էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների)
 վավերապայմանների լրացմանը ներկայացվող պահանջները

Պահանջի ծածկագիրը	Պահանջի ձևակերպումը
1	Էլեկտրոնային հաղորդագրությամբ պետք է փոխանցվի «Գրանցված բժշկական արտադրատեսակի մասին տեղեկություններ» (hccdo:MedicalProductDetails) վավերապայմանի 1 օրինակ
2	«Բժշկական արտադրատեսակի փորձաքննության եւ գրանցման ընթացակարգեր անցկացնելու դիմումի մասին տեղեկություններ»

Պահանջի ծածկագիրը	Պահանջի ձեւակերպումը
	(hccdo:MedicalProductApplicationDetails) վավերապայմանը պարտադիր լրացվում է
3	«Սկզբնական ամսաթիվը եւ ժամը» (csdo:StartTime) վավերապայմանը պարտադիր լրացվում է
4	«Վերջնական ամսաթիվը եւ ժամը» (csdo:EndTime) վավերապայմանը չի լրացվում
5	բժշկական արտադրատեսակների գրանցման մասին Հանձնաժողովում պահվող տեղեկություններում չպետք է լինի «Բժշկական արտադրատեսակի գրանցման դիմումի համարը» (hcsdo:MedicalProductApplicationId) վավերապայմանի արժեքին եւ «Վերջնական ամսաթիվը եւ ժամը» (csdo:EndTime) չլրացված վավերապայմանին համընկնող գրառում
6	Եթե «Բժշկական արտադրատեսակի գրանցման եւ (կամ) դրա հետ կապված ընթացակարգերի անցկացման դիմումի տեսակի ծածկագիր» (hcsdo:MedicalProductApplicationKindCode) վավերապայմանի արժեքը հավասար չէ «բժշկական արտադրատեսակի գրանցում անցկացնելու դիմում» արժեքին, ապա «Բժշկական արտադրատեսակի գրանցման հավաստագրի մասին տեղեկություններ» (hccdo:MedicalProductRegistrationCertificateDetails) վավերապայմանը պարտադիր լրացվում է
7	Եթե «Բժշկական արտադրատեսակի գրանցման եւ (կամ) դրա հետ կապված ընթացակարգերի անցկացման դիմումի տեսակի ծածկագիր» (hcsdo:MedicalProductApplicationKindCode) վավերապայմանի արժեքը հավասար չէ «բժշկական արտադրատեսակի գրանցում անցկացնելու դիմում» արժեքին, ապա բժշկական արտադրատեսակների գրանցման մասին Հանձնաժողովում պահվող տեղեկությունները պետք է ներառեն «Գրանցման հավաստագրի համարը» (hcsdo:RegistrationCertificateId) վավերապայմանի արժեքին համընկնող տեղեկություններ
8	Եթե «Բժշկական արտադրատեսակի փորձաքննության եւ գրանցման ընթացակարգեր անցկացնելու դիմումի մասին տեղեկություններ» (hccdo:MedicalProductApplicationDetails) վավերապայմանը լրացված է, ապա պետք է լրացված լինի «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին դիմումի ուսումնասիրման ընթացքի հետազոտության համար կարգավիճակի ծածկագիր» (hcsdo:MedicalProductRegistrationStatusCode) կամ «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին դիմումի ուսումնասիրման ընթացքի հետազոտության համար կարգավիճակի անվանում» (hcsdo:MedicalProductRegistrationStatusName) վավերապայմաններից մեկը

Պահանջի ծածկագիրը	Պահանջի ձեւակերպումը
9	<p>Եթե «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին դիմումի ուսումնասիրման ընթացքի հետազոտելիության համար կարգավիճակի ծածկագիր» (hcsdo:MedicalProductRegistrationStatusCode) վավերապայմանի արժեքը համապատասխանում է «այլ» արժեքի, ապա «Բժշկական արտադրատեսակի գրանցման վերաբերյալ դիմումի ուսումնասիրման ընթացքի հետազոտելիության համար կարգավիճակի անվանում» (hcsdo:MedicalProductRegistrationStatusName) վավերապայմանը պարտադիր լրացվում է</p>
10	<p>Եթե «Ռեֆերենտ պետության ծածկագիր» (hcsdo:ReferenceUnifiedCountryCode) կամ «Ճանաչման պետության ծածկագիր» (hcsdo:RecognitionUnifiedCountryCode) վավերապայմանը լրացված է, ապա «Դասակարգչի նույնականացուցիչ» (codeListId հատկանիշ) հատկանիշի արժեքը դրա կազմում պետք է պարունակի Տեղեկատվական փոխգործակցության կանոնների VII բաժնում նշված՝ աշխարհի երկրների դասակարգչի ծածկագրային նշագիրը</p>
11	<p>Եթե «Ռեֆերենտ պետության ծածկագիր» (hcsdo:ReferenceUnifiedCountryCode) կամ «Ճանաչման պետության ծածկագիր» (hcsdo:RecognitionUnifiedCountryCode) վավերապայմանը լրացված է, ապա դրա արժեքը, աշխարհի երկրների դասակարգչի համաձայն, պետք է համապատասխանի երկրի ծածկագրին՝ ISO 3166-1 ստանդարտին համապատասխան</p>
12	<p>«Բժշկական արտադրատեսակի լրակազմության մասին տեղեկություններ» (hccdo:MedicalProductSetDetails) վավերապայմանը չի լրացվում</p>
13	<p>Եթե «Բժշկական արտադրատեսակի գրանցման հավաստագրի մասին տեղեկություններ» (hccdo:MedicalProductRegistrationCertificateDetails) վավերապայմանը լրացված է, ապա պետք է լրացված լինի «Բժշկական արտադրատեսակի գրանցման հավաստագրի կարգավիճակի ծածկագիր» (hcsdo:MedicalProductRegistrationCertificateStatusCode) կամ «Բժշկական արտադրատեսակի գրանցման հավաստագրի կարգավիճակի անվանում» (hcsdo:MedicalProductRegistrationCertificateStatusName) վավերապայմաններից մեկը</p>
14	<p>Եթե «Բժշկական արտադրատեսակի գրանցման հավաստագրի կարգավիճակի ծածկագիր» (hcsdo:MedicalProductRegistrationCertificateStatusCode) վավերապայմանը համապատասխանում է «այլ» արժեքի, ապա «Բժշկական արտադրատեսակի գրանցման հավաստագրի կարգավիճակի անվանում» (hcsdo:MedicalProductRegistrationCertificateStatusName)</p>

Պահանջի ծածկագիրը	Պահանջի ձևակերպումը
	վավերապայմանը պարտադիր լրացվում է
15	«Բժշկական արտադրատեսակի գրանցման դույնում փոփոխություններ կատարելու ամսաթիվ» (hcsdo:RegistrationCertificateModificationDate) վավերապայմանը չի լրացվում
16	«Բժշկական արտադրատեսակի ծածկագիր» (hcsdo:MedicalProductClassificationCode) վավերապայմանը չի լրացվում
17	«Բժշկական արտադրատեսակի ծածկագրի անվանում» (hcsdo:MedicalProductClassificationName) վավերապայմանը չի լրացվում
18	«Բժշկական արտադրատեսակի պոտենցիալ ռիսկի դասի ծածկագիր» (hcsdo:RiskClassCode) վավերապայմանը չի լրացվում
19	«Բժշկական արտադրատեսակի արտադրողի մասին տեղեկություններ» (hccdo:MedicalProductManufacturingAuthorizationHolderDetails) վավերապայմանը չի լրացվում
20	«Բժշկական արտադրատեսակի արտադրողի լիազորված ներկայացուցչի մասին տեղեկություններ» (hccdo:MedicalProductManufacturerAgentDetails) վավերապայմանը չի լրացվում
21	«Բժշկական արտադրատեսակի կիրառման ցուցումներ» (hcsdo:UserGuidePdfBinaryText) վավերապայմանը չի լրացվում
22	«Բժշկական արտադրատեսակի մականշվածքի պատկեր» (hcsdo:ImageMarkingPdfBinaryText) վավերապայմանը չի լրացվում

25. «Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկություններ» (P.MM.06.MSG.002) հաղորդագրության մեջ փոխանցվող «Բժշկական արտադրատեսակների գրանցման մասին տեղեկություններ» (R.HC.MM.06.001) էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների) վավերապայմանների լրացմանը ներկայացվող պահանջները ներկայացված են 14-րդ աղյուսակում:

«Բժշկական արտադրատեսակի գրանցման մասին տեղեկություններ»
 (P.MM.06.MSG.002) հաղորդագրության մեջ փոխանցվող «Բժշկական
 արտադրատեսակների գրանցման մասին տեղեկություններ»
 (R.HC.MM.06.001) էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների)
 վավերապայմանների լրացմանը ներկայացվող պահանջները

Պահանջի ծածկագիրը	Պահանջի ձևակերպումը
